

Մէկը սրտի ցաւ է ունենում. գնում է մանգալու: Դաշտում տեսնում է, որ մի խոտ է բռասած լինում, տօրէները տվկու պէս դեղնած: «Հաւասը» զալիս է. տերևները պոկում, մանրում է և թղթի մի կտորի մէջ փաթթում, գնում է բերանը, ծխում: Դրա վրայ սրտի ցաւը մեղմանում, անցնում է: Դրանից է մնացել թութուն ծխելու սովորութիւնը:

Մի հարուստ մարդ մի շատ խոցոս աղջիկ է ունենում: Հայրը նրա համար շատ փող է կորցնում, բայց չի կարողանում լաւցնել: Աղջիկը տեսնելով, որ իր պատճառով հայրը միշտ «նամու» է լինում, զլուխը վերցնում, գնում է մի մեծ անտառ: Պատահմամբ այստեղ մի փոքր, ծաղկած թուփ է տեսնում: Մտածում է փորձել այդ թփի տերևները ճղկել ու ջուրը քսել երեսի խոցերին: Այդպէս էլ անում է. անում է ու լաւում: Խոկոյն վագրում է տուն և հօրը պատմում ծառի գորութիւնը: Հայրը հետաքրքրուած, աղջկան հետ գնում, զրտնում է այդ բժշկարար թուփը և տանում իրանց մօտ տնկում.՝ դա թութունն էր:

«Իւչ-գիւլ» \*) ասուած ծաղկից չորս ծաղկաւորը որ զըտնեն ու թանի մէջ զցեն, ուկի կը դառնայ:

Պրասը ով որ դիմիցն ուտէ, ամուսինը կը մեռնի:

#### V. Կ Ե Շ Պ Ա Շ Ի Ե Շ Ր.

Կենդանիների պաշտամունքի մասին, ինչպէս և ծառերի ու բոյսերի, նրանց մօտ ոչինչ չի լիշտում: Գոնէ ինձ յարտնի չեն այնպիսի թռչուններ ու կաթնասուններ, որ նրանց մօտ պաշտուէին և մեղք համարուէր նրանց սպանելը կամ բռնը քանդելը: Ակչու է՝ կան միքանի թռչուններ ու կաթնասուններ, որոնց միսը համշէնցին չի ուտում, բայց այդ ոչ թէ պաշտելուց, ինչքան զգուելուց, ու սովոր չը լինելուց: Այսպէս՝ կաչաղակին ոչ ոք չի սիրում, ոչ էլ պաշտում. երեմն բռնում, զարկում են, բայց միսն ամենքը չեն ուտում. ուտողներ էլ կան, չուտողներ էլ: Փիչ-շատ միւսներից աւելի քնքուշ վերա-

\*) Մի տեսակ խոտ է, որ միշտ երեք ծաղկե է բերում:

բերում են աղաւնուն, «պօրշուկին» (սարեակ), ծիծեռնակին. բայց դարձեալ դրանցից ոչ մէկին սպանելը մեղք չեն համարում, իսկ առաջին երկուսին հօ համով ուստում են: Կաթնասուններից, բայց սովորականներից՝ նրանք չեն ուստում նապաստակի միաը, ինչպէս և շատ տեղ վարդի կենդանիներից ամենից աւելի սիրում են եղնիկներին, բայց դրանց բռնելն ու միան ուտելը ոչ ոք մեղք չի համարում:

## ա. Թ Ռ Հ Ո Ւ Ա Կ Ե Ր.

Հաւ: Հաւն ու ճնճղուկը մէկ անդամ եկել են իրար մօտ: Ճնճղուկն սակէ է. «Ըստուած թէ հրաման տալ, ևս պիտի թուչիմ»: Հաւն էլ պարծեցել է. թէ «Ըստուած հրաման տալ, չը տալ, ևս պիտի թուչիմ»: Ճնճղուկը փորձել աջողուել է. Հաւը մնացել է, չի կարողացել:

Հաւի համար սառւմ են, թէ սաստանալ է. զիշերով նրան բռնելը լաւ. չեն համարում:

«Կուկու»: «Կուկուն» սոռաջ մարդ է եղել: Երկու եղբար իրար կորցրել են. դրա համար է որ մինչեւ հիմա էլ իրար ման են գալիս ու ձայն տալիս:

«Կուկուր» մասին պատմում են, թէ ով որ դարնան, վաղ առաւօտեան, չը լուացուած, «ծունր» չարած, հաց չը կերած՝ առաջին անդամ նրա ձախն լսէ, «կուկուն» նրան «կալէ կու», արփնքն՝ կը կալէ (՞ կը բռնէ): Ան տարին նրա զործը լաւ չի դնալ. աջողութիւն չի ունենալ: Դրա համար դարնան առաւօտները վերիկնանալուն պէս՝ պէտք է շուտ լուացուել, աղօթքը շուտ առել և շուտ էլ հաց ուտել: Ամանք վերկինալուն պէս՝ մի կտոր հաց բերանն են դնում, որ «չը կալուին»:

՚Փիծեռնակի: ՚Փիծեռնակի առաջ ձառի վրայ է եղել բռն գնելիս. օձը ելեկ՝ պոչը կծել է. դրանից է որ նրա պոչը «չաթալ» է մնացել և բռնն էլ պներումն է շինում:

Բազէ: Պատմում են, որ մի պառաւ, իսկ ոմանց ասելով՝ ինքը Տիրամայրը, անեծել է բաղէին—աղբիւրի ջուրը վերևից՝ սղբտորելուն համար—որ ամառուալ Յ ամիսներին ջուր չը կա-

բողանայ խմել. աչքին արիւն երևայ: Դրանից է որ բագէն այդ ամիսներին միշտ ծառմ է. որովհետև ծարաւ է և ջուր չի կարողանում խմել:

Բռւ: Բուն հին ժամանակ մարդ է եղել, մի շատ ծոյլ մարդ, որ իր համար շոր անգամ չէ կարողացել գտնել: Նրա մօտինները զդուելով նրա ծուլութիւնից և մտքներում դնելով նրան մարդ գարձնել, մէկ օր տալիս են նրան իրանց շորերը և հետները եկեղեցի տանում: Այբովեղ յանկարծ բալոր շոր տուողները մէկ խօսք արած՝ թափւում են վրան, իտո առնում իրանց շորերը և ծոյլին մերկ ու տիլոր թողնում բազմութեան առաջ: Այդ նեղ ժամանակին ծոյլին օգնութեան են հասնում թեւաւորները և ամեն մէկը նրանցից մի-մի փետուր տալով, ծածկում են նրա մերկութիւնը, հետները թռացնում, մարդկանց աչքերից ազատում: Բայց ապերախտը, փոխանակ կամաց-կամաց նրանց պարտքը տալու, սկսում է նրանց ցեղից կոտորել ու կոտորել: Աստծու ամեն զիշեր մի-մի թռչուն ուտել: Դրա վրայ սաստիկ բարկանում են նրա թեւաւոր ընկերները և խօսքը մէկ են անում, վճռում են որ հէնց որ տեսնեն, մի լաւ պատժեն այդ անզգամին: Դրա համար է՝ որ բուն փախչաւմ է լորայց. ցերեկով չլ երևում և միայն զիշերներն է դուրս գալիս:

«Սոնդրիլիկ» (յոպայ). Դրա համար էլ առում են, թէ նոր հարս է եղել, մաղերը սանզրելիս՝ տէզրը վրայ է եկել, ամօթից թռչուն է դառել և սանրը զիշին թռել, գնացել է:

Տարշակ. Ճատ առաջ, մէկ անգամ իրիկնապահին երկու երեխայ, եղբայր ու քոյլ «սարն» անսուառ են գնում հորթեր փնտուելու: Երեխաները ման են զալիս, ման են զալիս, չեն գտնում: Ուշ զիշեր է դառնում, մնում են անտառում և տատրուկ դառնում: Մինչև հիմայ էլ նրանք հորթերին են ման զալիս, և նրանց ձայն տալիս, նրանց կանչելու ձայնից՝ իրանց անունն է մնացել: (Այդ թռչունի անունը գրով շատ դժուար է ուղղի արտայայտել. համշէնցիները մի կերպ՝ բերանը սղմած շրթունքներով են արտասանում, այնպէս որ հորթին կանչելու ձայնին է նմանում «թֆիւ—թֆիւկ»):

բ. Կաթնասումեր

Այժ. Աշխարը Աստծու ստմեծածն է, իսկ այծը՝ սատանի։ Սատուած որ ոչխարին հոգի է տալիս, նա իսկոյն վեր է կենում, սկսում է ման զալ, իսկ սատանան ինչքան աշխատում է, այծին չի կարողանում հոգի տալ: Ճարը կտրած՝ գնում է Սատծուն ասում է, թէ «Բնէ պէտք է անեմ, այծս չի կանգնում»։ Աստուածն էլ նրան ասում է. «գնա, ասա, Աստծու հրամանով ել, գնա»։ Սատանան գնում է այծին ասում. «Իմ հրամանովս ել, գնա»։ Այծը չի կանգնում։ Էլի գնում է Աստծու մօտ, ասում նրան. «ասեցի, բայց էլի չը շարժուեց»։ Աստուած էլի ասում է նրան. «գնա, ասա, Աստծու դօրութիւնով ել, կանգնիր»։ Աերջապէս ճարը կտրած, գնում ասում է թէ չէ, այծը իսկոյն ոտի է կանգնում։ Սատանի բարկութիւնը գալիս է. պոչին քացի որ չի խփում, պոչը վեր է ցցւում։ Դրանից է որ այծի պոչը վեր դարձած է լինում։

Եղնիկի. Եղնիկների համար ասում են, Աստծու կովերն են։ Կատու. Կատուի մատին այս նախապաշարումներն են պատմում։

Կատու սպանելը մեղք են հայարում, ասում են, որ սպանողի մատաղը չի ընդունուիլ։

Կատուն մարդու ձեռքից հաց չը ուտիլ, ընկած կուտի, մէկ էլ՝ աչքը խուփ կառոի, որ «ընդունը» (միւս կեանքսամ) «ինքեար ընէ» (ուրանայ) կերածը։

Կատուն թէ որ հիւանդի անկողնին մօտենայ, հիւանդը չի մեռնիլ։

Մուկ. Մկան ու «պօսպօլի» (մեծ մուկ, բրյու) համար պատմում են, թէ «պօսպօլը» մէկ անգամ ուղեցել է խնամութիւն անել մկների հետ, նրանց ցեղից աղջիկ առնել, բայց մկները չեն տուել։ Դրա համար «պօսպօլները» նրանց թշնամի են ընկել և մինչեւ այսօր էլ հալածում են։

Մկան համար էլի ասում են, թէ հարիւր տարեկան որ մինի, զղջիկ կը դառնայ։

Խոզ. Մէկ անգամ հայի ու թուրքի մարդարէները (Յիսուսն ու Մահմէտը) իրար հետ խօսք են կապում գետնից աղու-

ըիւր հանելու, թուրքի մարգարէն մեր մարզարէից մի քանի  
օր ժամանակ է ուզում, պայման դնելով, որ օրը հասնելուն  
պէս, դան ու գաւաղանը մէկ խփելուն՝ ջուրը դուրս հանեն։  
Այդ մի քանի օրում թուրքի մարգարէն ծածուկ հողի տակ  
ջրով լիքը տկեր է թաղում, վերջը խաբար զլկում հայի մար-  
գարէին, որ դայ տեսնի, թէ ինչպէս է աղբիւր ըղխեցնում։  
Հայի մարգարէն միամիտ գալիս է, խաբար չունենալով թուրքի  
թաղած տկերից։ Միամիտ սրտով խփում է գաւաղանը և յան-  
կարծ չոր ու ցամաք գետնի տակից մի վճիռ ու մշտական  
աղբիւր է բղխում։ Հերթը որ գալիս է թուրքի մարգարէին,  
ասում է որ ինքը այլտպա՞ չի խփել. տանում է տկեր թաղած  
տեղը։ Խփում է մէկին, միւսին, երրորդին ջուր դուրս չի զա-  
լիս, խոզն եկել, հողը փորել, տիկը ծակել, ջուրը հանել էր։  
Գնում է վերջին թաղած տկի մօտ. տեսնում է, որ այնտեղ  
էլ խողը գնացել, նոր փորել է և ինքն էլ տկի տեղ պառկել։  
Բարկացած՝ բռնում է խողի պոչից, ճշճացնում նրան ու ա-  
սում։ «այ մունդառ ըլլիս դու»։ Խիկոյն հայի մարգարէն էլ  
վրայ է բերում, թէ «Սալթ» (միայն) քու բռնած տեղդ մուն-  
դառ ըլի թեօլ (թող)։ Այդ է պատճառը, որ թուրքերը խողի  
միսը չեն ուտում, իսկ հայերը միայն պոչն են դէն զցում։  
Գոմէ։ «Գոմշաեղը» պարձեցել է, թէ «ինձ չը վերցնելու  
բռու չի լինիլ. ծունկ որ չոքում եմ, վախենում եմ, թէ աշ-  
խարհը չը քանդուի»։

Արշ. Արջը առաջ յոյն է եղել։ Մէկ օր ծառին նոտած  
տանձ ուտելիս է լինում։ Պատահմամբ նոյն ճանպով անցնե-  
լիս է լինում ինքը Քրիստոս Տէրը իր աշակերտներով։ Քրիս-  
տոսը նրանից տանձ է ուզում, բայց նա տանձի տեղ՝ վերևից  
«իրթիզն» (միջի կճապն ու կորիզը, «չեչը») է զցում։ Երեք  
անգամ ուզում է Տէրը, երեք անգամին էլ որ արդպէս է անում  
յոյնը, Տէրը բարկանում է վրան, և անիծում, ասելով։ «գլխի-  
վեր էլար, գլխիվեր իջնու»։ (արջը գլխիվայր է իջնում ծա-  
ռից)։ Այդ խօսքերի ասելն ու նրա արջ գառնալը մէկ է լինում։  
Սրանք ասում են, թէ արջը առաջ մարդ է եղել, մայրն  
անիծել արջ է դարձել։

Ուրիշներն էլ ասում են, թէ արջն առաջ «Հօրմի» (լոյն) տէրտէր է եղել:

գ. Երկակենցաղ կենդանիներ

Կրիա: Կրիան առաջ մարդ է եղել, ջրաղացպան, բայց շատ «Հախ» (վարձ) առնող և գողին մէկը: Խեղճի մէկը մի օր անիծսմ է նրան՝ անիրաւ վարձ վերցնելու համար, ասելով. «Քեզ տեսնեմ այդ «կօկօշը» (զդմի աման, որով «Հախը» չափում են) գլխիտ վրայ անցած՝ ման դալիս»: Անէծքը կատարում է և ջրաղացպանը դառնում է կրիա:

դ. Զկներ ու ջրային կենդանիներ

Զկների մասին առհասարակ աւանդութիւններ չը կան, երևի մեծ զետերից ու լճերից հեռու մնացած լինելու պատճառով: Ոչ հայրենիքում, ոչ էլ այստեղ մեծ զետեր ու լճեր չը-կան, իսկ տեղ-տեղ թէկև ծովն էլ հեռու չէ նրանցից, բայց ձկան համար յատուկ՝ ծովը զնալու ոչ ժամանակ ունեն, ոչ էլ սովորութիւն, թէկև ամեն տեսակ ձկնեղէն էլ ուսում են:

Այսքան միայն ասում են, որ աշխարհում ամենամեծ «Հոգւեօրը» (կենդանի) ձուկն է: Երևի լսել են կէտի մասին, բայց անունը չը գիտեն:

Ջրային կենդանիներից մի նախապաշարմունք միայն լը-սել եմ «խեչքարի» (խեցգետին) մասին:

Ասում են, թէ որ «խեչքարը» մարդու ձնոքից կծիր մինչև երկնքից ամպի ձախնը չը լսուի, կամ էշը Շ անգամ չը դռայ, չի թողնիլ, այնքան ամուր է կպչում:

ե. 0 ձ

Օձը սկզբում դրախտի դռնապան է եղել: Նա է եղել որ խաբել է Եւային: Դրա համար Աստուած անիծել է նրան և դրախտից դուրս արել: Օձը զնացել է, բայց մտքումը գրել է նրա ստեղծածներին միշտ վնասել: Բայց Աստուած յայտնել է նրան, որ նրանից մեռածներին մեղք չի հարցնելու: Դրանից է, որ օձից մեռածը ինչքան էլ մեղաւոր լինի, Աստծու հրամանով անպատճառ արքայութիւն պիտի գնայ:

Օձի համար ասում են, որ նա ծնում ու գոյանում է սպիտակ «քեաստօնա» կոչուած դրումից: «Քեաստօնա» դրումը

Երբեմն շատ, անչափ մեծանում է և մէջը նշարւում է արեան նման կարմիր պուտ զէնց այդ պուտի համար ասում են, որ օձի արիւն է. որ նա դրանից է դոլանում և վերջը դուրս դալիս:

Պատմում են, որ մի տեսակ օձ կայ, որ զլիսին թառ ունի: Այդ թառը շատ գարմանալի յատկութիւն ունի. ով որ նրան տիրանալ, մի գանձի տէր կը դառնայ: Դա զիշերներն է դուրս գալիս թասի լուսով արածելու և սաստիկ լոյս է տալիս չորս կողմլ:

Օձը որ սպանեն մէջը լորեա «սանդրեն» (տնկեն), երբ բուսնի՝ գան, հանեն, զրպանը դնեն և տեղն ու տեղը պառկեն, զիշերը մի գազան կը գայի թէ որ նրանից գախենան, գազանը նրանց կուտէ, իսկ թէ չը վախենան, նրանք այստեղ մեծ գանձ կը գտնեն:

Ոմանք ասում են, թէ օձի մէջ բուսած լորեան զրպանը գնողը ուրիշներին չի երևալ. իսկ ով որ ուտի՝ սատանին կը տեսնի:

Օձը երեկոյեան սպանելը լաւ չէ. սպանողը կը հիւանդանար:

Օձ սպանելիս՝ ծնկից վեր բարձրացնելը, ասում են մեղք է:

Օձը թէ որ երկաթով սպանեն, լաւ չէ. արքայութիւն կը գնայ. դրա համար նրան երկաթով չեն սպանում, այլ փայտով:

Օձն ասել է, թէ ով որ իրան սպանէ, պէտք է եղբօր պէս թաղէ իրան: Դրա համար էլ օձը սպանելուց յիսոյ գետնին չեն թողնում, կամ ուղղակի ծառի վրայ են կախում և կամ թէ չէ զետինը փորում, հողի մէջ թաղում են:

Ասում են, որ եթէ գետնի երեսին մնայ, մեծ վնաս կարող է տալ մարդկանց իր քիսուվը. դրան «օձն քիստ» են ասում: Այդ քիստի համար ասում են, թէ վոքը ու ասեղի նման սասակի սուր բան է. եթէ մարդու ոտը մտնի, կարող է անբուժելի խոց և ուռուցք պատճառել. ինքն իրան կարող է վեր բարձրանալ մարմնի մէջ, նոյն իսկ մինչեւ զլուխը, և եթէ մնայ, վտանգաւոր դառնալ: Երբեմն մարմնի մի տեղից ինքն իրան ծակում է և դուրս գալիս:

Ոձի համար ասում են, որ «կօտեօշ» (եղջիւր) ունի: Մէկ անգամ ինձ ցոյց են տուել. դա մի փոքրիկ, սուրուլիկ, մի քիչ ծակած սև ոսկոր է, սևագոյն ու դրսից պլազուն, ասում են, որ դա օձից է մնացել:

Ելի ասում են, թէ «թըւօնդը օձօնը հընու մաշտուն հօմար շինուած է». այսինքն որ՝ հրացանը օձի ու մարդու համար է եղել: Ոձն էլ, մարդն էլ մարդու թշնամիներ են, հրացանն եղել է, որ մարդ իր երկու թշնամիներից պաշտպանուի:

Մէկ էլ ասում են, եթէ որ օձին նշան անեն, չի դիպչիլ: Առաջին տեսած օձը կամ որևէ է սողուն պէտք չէ ոպանել. պէտք է թքել վրան ու անցնել «ցաւս վրադ» ասելով:

Ոճ որ սպանեն, անձրև կը գայ:

Կան թռչուններ, որոնք օճ են կուլ տալիս, ինչպէս ձըկնիուլ և աղն: Եթէ պատահի, որ մի այդպիսի թռչուն օձը բերնին թռչելիս լինի մէկի վրայով, մարդը «կեօխ» կըբանուի: Եւ ամենավատ «կեօխը» օձիցն է լինում, դա ամենից դժուար է բժշկում:

#### գ. Միջատներ

«Բուզը» (կովերին ու եղներին փախցնող-խալթող ճանճ, զնեւ): Մէկ անգամ «բուզը» «էղրադ» է անում, բոլոր մալերը գնում են. միայն կովն ու եղը չեն գնում. դրա համար «բուզը» մտքին է պահել և նրանց «բղեցնում է»:

«Բուզն» ասել է, թէ ծլիծազս չըգար, մալերին ճառերից կը թռցնէի. գոմէշին էլ կը բղեցնէի, բայց ծաղրս բռնում է չեմ կարողանում:

#### VI. Մարդ

Մարդու մարմնի մասերը: Ասում են որ տղամարդու կողքի ոսկորներից մէկը պակաս է: Այդ հիմնում են Մովսէսական այն աւանդութեան վրայ, որ ասում է, թէ Աստուած Եւային ստեղծելու համար Ադամի կողքից մի ոսկոր հանեց: Կարծում են, եթէ Սդամին պակաս էր, հիմա էլ ամեն տղամարդ մէկ ոսկոր պակաս կունենայ:

Եղուակ: Ադամի մարմինը պատուիրանազանցութիւնից առաջ դրսից ամբողջապէս եղունգով էր ծածկուած կաշուի տեղ:

Վերջը՝ երբ Աստուած բարկացաւ, պատժեց նրան, եղունդը վրայից առաւ, կաշին թողեց և մի քիչ տեղ միայն թող տուեց եղունդը՝ իբրև նշան հին վիճակի: Դրա համար էլ այն կորցնողը պատժւում է:

Կորած եղունդը կամ պէտք է թաղել և կամ ալբել, թէ չէ՝ միւս կեանքում նրանից կուզեն: Կորցնողին կը պատժեն, մագէ կամ թաղից կանցկացնեն, որ բերէ, իսկ թաղածը կամ ալրածը իրանից էլ առաջ կը գնար: Դրա համար եղունդ կտրելին՝ ասում են. «ընդընը» (միւս կեանքում) օր ուզիմ՝ հաղիր կաց:

Եղունդի համար էլի ասում են. թէ ում եղունդը որ երկար լինի, իսկոք կը լինի: Ով որ եղունդի վրայ շատ սպիտակ պուտեր ունենալ, ոչխարի բախտ կունենայ (ալսինքն՝ ոչխարից օդուտ կը տեսնի):

Մաղ: Սանդրելուց յետոյ զլսի թափած մազերը կամ պիտի թաղել և կամ ալբել, թէ չէ՝ թէ որ ալնպէս թափթինն և ճնճղուկը տանի իր բունը, մարդը կալիսացաւի կը բռնուի, Ասում են, որ մազը ինչքան էլ մնայ հողում, չի փթիլ:

Մաֆներ: Ճկոյթն ու ցուցամատը իրար կպցնող մարդու համար ասում են, թէ մայրը նրան իր կաթը հալալ է արել:

Լեռու: Ով որ լեզուն մօտեցնի արմունկին, կամ արմունկը տանի ուսից ներքեւ, նա թէ կառնի, կը թռչի:

Կի՞: Կնոջ համար ասում են, թէ սատանայ է: Զէ որ նա է խարել Ադամին. Ա. Կարապետի զլուխն էլ նա է կտրել տուել, կնոջ գերեզմանն աւելի խորն են փորում, որ չը լինի, թէ սատանան դայ, տանի իր մօտ: Աղջիկներին ամեն կիրակի եկեղեցի չեն տանում, լաւ չեն համարում. տարին հազիւ մէկ երկու անգամ:

Հօր անհժուց: Ջրհեղեղի ժամանակն է լինում, ջուրը սկսում է չորս կողմից շատանալ ու մօտենալ: Մի տեղ էլ օրօրոցում մանուկը քնած է լինում, հայրը մօտը չի լինում: Մայրը տեսնելով, որ ջուրը քանի գնում հալ-հայ մեծանում է և պիտի խեղպաւի, գնում կանգնում է ուղղակի օբօրոցի վրայ, որ ջրեց բարձր մնայ ու ըը խեղդուի, մտահան աներով պառկած երեխային: Մի քիչ յետոյ հայրը որ գալիս է՝ տեսնում կնոջը:

ործորոցի վրայ կանգնած, բարկացած չի համբերում, խփում է նրա երեսին, հրում օրօրոցի վրայից և առնում է օրօրոցը ուսին, որ երեխին ազատի: Դրա համար է, որ մօր անէծքը որդուն չի բռնում, իսկ հօր անէծքը, ո դա մեծ բան է, վայ այն որդուն, որ հօր բարկութիւնը կը շարժի և հօր անէծքին կարժանանայ, հօր անէծքը անպատճառ կը բռնէ:

Կամ: Հին ժամանակ կաթը եփելիս՝ ինչքան որ վեր ելել, աւելացել է, սառչելիս էլ նոյնքան է մնացել, չի պակսել: Բայց մէկ անգամ մի պառաւ կաթը եփելիս՝ եռ եկած ժամանակ մօտը չի եղել, կաթը բարձրացել, մի քիչ թափուել է: Դրա վրայ պառաւը չի համբերել. բարկացած թքել է վրան: Դրանից է, որ հիմա կաթի «բէրեքէթը» կորել է, և եփալիս՝ աւելանում է, բայց սառչելիս՝ էլի պակսում է:

«Կաշութը «եղի պահէ»»: Այս խօսքերը առածի տեղ են բանում. նշանակում է, որ ինչ չափով որ չափես, քեզ էլ այնպէս կը չափեն: Աւանդութեամբ՝ իբր թէ հին ժամանակ ծերացածներին կալաթով ձորն էին զցում: Մարդու մէկը երբ իր պառաւ մօրը կալաթն է դնում, որ ներքեւ դլորի, մալրը կալաթից ձայն է տալիս, թէ «որդիս, կալաթը քեզի պահէ»: Այդ խօսքերից որդին զգացում է, միտքը բացւում և մօրն ազատում մահից:

## VII. Եղանակի գուշակութիւններ

Նոր-պարու օբեր: Նոր տարու առաջին օրից մինչև 12, նայած թէ որ օրը ինչ եղանակ է, նրանց համապատասխան ամիսներն էլ այնպէս կանցնեն: Առաջին օրը՝ յունսաւարն է. 2-դր՝ փետրուար և ալլն. 12-դը—վերջի ամիսն է: Այսպէս՝ թէ որ առաջի օրը պարզ լինի, առհասարակ ամիսն էլ պարզ կանցնի. թէ որ յունսաւարի 12-ին ձիւն գայ, գեկտեմբերն էլ ձիւնով կանցնի:

«Վարդելէ»: Փետրուարի 18-24 սկսում է հիւսիսային ու հարաւային քամիների կոյիւը: Կոյիւը տևում է մինչև փետրուարի 24-ի գիշերը, յաղթութիւնը ալր վերջի գիշերիցն է